ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/46

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական ռեգիստրի վկայական թիվ 53.110.1144429),

«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Ռափյանի (լիազորագիր՝ տրված 09.06.2021թ.),

ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի ղեկավար Ս. Խաչատրյանի,

ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի լիազորված ներկայացուցիչ Վ. Կիրակոսյանի (լիազորագիր՝ տրված 08.07.2021թ.),

քննելով ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 5-րդ փողոցի տուֆ քարով սալապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 01.07.2021թ. ներկայացված (01.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/46 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 01.07.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18-ը հունիսի 2021թ.-ի N 2 որոշումը և 24.06.2021 թ.-ին հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի պահանջը՝ կասեցնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով գնման ընթացակարգը, չեղյալ հայտարարել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18-ը հունիսի 2021 թ.-ի N 2 որոշումը և 24.06.2021 թ.-ին տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, վերականգնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ընթացակարգին «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի մասնակցության խախտված իրավունքը:

ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի կողմից 10.06.2021 թ.-ին տեղեկագրում հրապարակվել էր ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով «Արևշատի համայնքապետարանի կարիքների համար՝ ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 5-րդ փողոցի տուֆ քարով սալապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման մասին» գնման ընթացակարգի հրավեր, որի հայտերի բացումը սահմանված էր 16.06.2021 թ.-ին, ժ. 12:00-ին: «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Փոթոյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է գնման ընթացակարգին մասնակցության հայտ: Ներկայացված հայտը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին բավարորող, գրանցվել է գրանցամատյանում:

Գնահատման փուլում ներկայացված ծրարի հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավելի պահանջներին բավարարող: («ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի պահանջներին համապատասխան և հրավերով պահանջված Մասնակցության դիմում հայտարարություն՝ հավելված 1, Գնային

առաջարկ՝ հավելված 2 և կազմակերպության կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ):

Բացի «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ից, ընթացակարգին մասնակցության հայտ էին ներկայացված ևս երկու մասնակից:

Հանձնաժողովի նիստի ընթացքում բանավոր ներկայացվել է, որ, քանի որ ընթացակարգը կազմակերպված է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ուրբաթ օրը ժամը 11:00-ին տեղի կունենան գների նվազեցման շուրջ բանակցություններ: Եվ բանավոր ասվել էր, որ անհրաժեշտ է ներկայացնել «Քաղաքաշինության բնագավառի շինարարության իրականացման լիցենզիա, տրանսպորտային ներդիրով, ինչպես նաև մասնագիտական փորձառությունը և տեխնիկական միջոցներով հագեցվածությունը հիմնավորող ինչ որ փաստաթղթեր:

16.06.2021 թ.-ին «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի միջոցով ստացել ենք գրություն Արևշատ համայնքի ղեկավարի կողմից, ըստ որի 18.06.2021 թ.-ին (գրության մեջ բանակցությունների սկսման ժամ նշված չէ) հրավիրվել ենք Մրցակցային բանակցության, և պահանջվել է ներկայացնել ինչ-որ անհասկանալի «շին թույտվություն՝ պարտադիր», «տեխնիկական միջոցների ապահովվածություն», և «նմանատիպ աշխատանքների փորձ»:

Այս մասով պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերության պահանջները:

18.06.2021 թ.-ին «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից համայնքի ղեկավարին ուղարկվել է պատասխան գրություն և տեղեկացվել, որ գրությամբ նրա կողմից փաստաթղթերի ներկայացման պահանջները անհիմն են և պահանջը խախտում է «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքը:

Այնուամենայնիվ՝ 18.06.2021 թ.-ին ժ. 11:00-ին «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Է. ներկայացել է վերը նշված բանակցություններին: Բանակցությունների սկզբում գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացվել է պնդում, որ քաղաքաշինության բնագավառի շինարարության իրականացման լիցենզիայի տրանսպորտային ներդիրի ներկայացումը պարտադիր է: Է. Փոթոյանի հիմնավոր ներկայացվել է, որ պատվիրատուի կողմից կատարվելիք շինարարական աշխատանքները ըստ ՀՀ գործող օրենսդրության

համարվում են շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ, քանի որ ըստ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերության շինարարություն իրականացնողները պարտավոր են ունենալ համապատասխան գործունեության իրավոնքի լիցենզիա: Նույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Համաձայն լիցենզավորման մասին ՀՀ օրենքի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը սահմանող 43-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի 3-րդ ենթակետի քաղաքաշինության բնագավառում լիցենզիան տրամադրվում է շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) համար:

Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից համակարգվող քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման համակարգի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով: 5-րդ պարբերությամբ սահմանում է, որ շինարարության թույլտվություն չի պահանջվում Կառավարության սահմանած ցանկում ներառված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 19-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման 26-րդ կետով Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ կատեգորիաներով: 26-րդ կետի 1-ին երթակետն է ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ 1 կատեգորիա.:

Որոշման 27-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ (վերը նշված) 26-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի (1 կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման,

ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման, ընթացիկ պահպանման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 4-ով սահմանված է ցանկ. որում ներառված են օրենքով և Հայաստանի Հանրապետության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 26-րդ կետի 1-ին ենթակետով, 27-րդ կետի 1-ին ենթակետով և 136-րդ կետով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման, միջին նորոգման, ընթացիկ պահպանման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքները:

Նշված N 1 ցանկի 7-րդ կետը սահմանում է շինություններում (կառուցվածքներում) ընթացիկ նորոգման, միջին նորոգման, ընթացիկ պահպանման աշխատանքները: Ըստ 7-րդ կետի 11-րդ ենթակետի ԺԷ) պարբերության Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքային ենթակայության, ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ներհամայնքային փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալապատման, խճապատման, դրանց ընթացիկ նորոգման ու բարեկարգման աշխատանքները հանդիսանում են ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտներ և հանդիսանում են շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ:

Առկա է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 21.04.2021թ. N ՍՊ//9729- 2021 հանձնարարականը, ըստ որի ՀՀ համայնքներին առաջարկվել է համայնքային նշանակությա՝ ոչ տարանցիկ ճանապարհների սալարկման, խճապատման այլատանքները սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացնելու մասով առաջնորդվել՝ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 4-ով հաստատված ցածր ռիսկայնության աստիճանի (1 կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների ցանկի (N 1 ցանկ) 7-րդ կետի 11-րդ ենթակետի «ԺԷ» պարբերությամբ նախատեսված կարգավորումներով:

Հետևաբար լիցենզիայի ներկայացման պահանջը անհիմն է:

Սակայն գնահատող հանձնաժողովը առանց հաշվի առնելու ներկայացված փաստերը, խախտելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 59-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, կայացրել է ՀՀ գործող օրենսդրությանը հակասող որոշում և որոշել է «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել

անբավարար և կազմակերպությանը կամայականորեն դուրս թողնել հետագա մրցակցությունից՝ զրկելով գների իջեցման շուրջ տեղի ունեցող բանակցություններին մասնակցելու հնարավորությունից:

Վերը թվարկվածը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ պատվիրատուի կողմից խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների պահանջները, ինչը խախտել է «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի օրինական իրավունքները:

Խնդրում ենք կասեցնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով գնման ընթացակարգը, չեղյալ հայտարարել ՇՄԱՀ- ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18-ը հունիսի 2021 թ.-ի N 2 որոշումը և 24.06.2021 թ.-ին տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որշման մասին հայտարարությունը, վերականգնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ընթացակարգին «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի մասնակցության խախտված իրավունքը»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին՝ ապահովելով նաև Ընկերության ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.07.2021թ. թիվ 107 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 01.07.2021 թվականի, թիվ ԲՔԱ-ԳՆ/2/10798-2021 գրության, Ձեզ ենք ուղարկում ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքապեսարանի կողմից կազմակերպված ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը: Հայտնում ենք, որ ընթացակարգի բոլոր գործառույթների ժամանակ պահպանվել է գործող կարգը և պայմանագիր կնքելու որոշումի հրապարակումից 5 օր հետո կնքվել է համապատասխան աշխատանքների կատարման պայմանագիր, որը նույնպես համաձայն գործող կարգի հրապարակվել է մեր կողմից / տես կից կնքված պայմանագիրը/:

Ձեզ է ուղարկվում նաև նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, որից պարզ է դառնում, որ նշված աշխատանքները փաստացի ճանապարհի կառուցում է իրենց կողային առուներով /ջրահեռացման համակարգով/ ամրացված ճանապարհային հենքով, սալապատումով և կողային բետոնային շերտով, ամրացումով, որը պահանջում է հատուկ մասնագիտական կարողությունների և հանձնաժողովի պահանջը գնման գործընթացի մասնակիցներին: ինչպես նշում է «Այ Քոնսթրաքշն» ընկերությունը, բոլորովին էլ կամայականություն չէ և նշված աշխատանքները չեն կարող դասակարգվել Նո 596-Ն որոշման 26-րդ կետի առաջին ենթակետով սահմանված ցածր ռիսկայնության աստիճանի /1-ն կատեգորիայի/ թվին ինչպես ներկայացնում է «Այ Քոնսթրաքշն» ընկերությունը այլ դասակարգվում 3-րդ ենթակետով սահմանված միջինից բարձր ռիսկայնության աստիճանի /3-րդ կատեգորիայի/ օբյեկտների թվին, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պարզ փորձաքննության /տես կից նախագծերի փորձաքննության եզրակացությունը/: Նշված աշխատանքների համար մասնագիտական լիցենզիայի առկայությունը պարտադիր է»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչների մասնակցությունը նիստին, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/46 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/46 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 5-րդ փողոցի տուֆ քարով սալապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ճանշին» ՓԲ, «Ույուտ Սենտր» և «Այ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում բացակայել է համապատասխան շինարարի լիցենզիան: Քանի որր կատարվող աշխատանքները ճանապարհաշինարարական աշխատանքներ են, Ընկերությանը տրվել է ժամանակ նշված փաստաթուղթը ներկայացնելու համար, որն այդպես էլ չի ներկայացվել, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ՝ համապատասխան լիցենզիայի բացակայության հիմքով:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ճանշին» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 24.06.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի և «Ճանշին» ՓԲԸ-ի միջև 30.06.2021թ. կնքվել է «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:

6. ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 5-րդ փողոցի տուֆ քարով սալապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել 01.07.2021թ.:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի 01.07.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքապետարանի 02.07.2021թ. թիվ 107 գրությամբ հայտնած դիրքորոշումը, 30.06.2021թ. կնքված թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով պայմանագիրը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի համաձայն՝

1.***Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2.***Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:***

(…)

5. ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

(…)

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանվում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ ***նախքան պայմանագրի կնքումը*** բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, ***բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:***

Այսպես, ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 5-րդ փողոցի տուֆ քարով սալապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ճանշին» ՓԲ, «Ույուտ Սենտր» և «Այ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում բացակայել է համապատասխան շինարարի լիցենզիան: Քանի որ կատարվող աշխատանքները ճանապարհաշինարարական աշխատանքներ են, Ընկերությանը տրվել է ժամանակ նշված փաստաթուղթը ներկայացնելու համար, որն այդպես էլ չի ներկայացվել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ՝ համապատասխան լիցենզիայի բացակայության հիմքով:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ճանշին» ՓԲԸ-ին՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 24.06.2021թ. տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ անգործության ժամկետ է սահմանվել ***հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:***

<u>ՀՀ Շիրակի մարզի Արևշատի համայնքապետարանի և «Ճանշին» ՓԲԸ-ի միջև 30.06.2021թ. կնքվել է «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:</u>

ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 5-րդ փողոցի տուֆ քարով սալապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ***<u>«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել 01.07.2021թ.:</u>***

Բողոքով Ընկերությունը ներկայացրել է հետևյալ պահանջը.

Կասեցնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով գնման ընթացակարգը, չեղյալ հայտարարել ՇՄԱՀ- ԳՀԱՇՁԲ-25/05 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18 հունիսի 2021թ. N 2 որոշումը և 24.06.2021թ. տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որշման մասին հայտարարությունը, վերականգնել ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05 ընթացակարգին «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի մասնակցության խախտված իրավունքը:

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումները համադրելով գործում առկա էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների հետ, ինչպես նաև հաշվի առնելով բողոքաբերի բողոքով ներկայացված պահանջը՝ հանգում եմ եզրահանգման առ այն, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման, քանի որ Արևշատի համայնքապետարանի և «Ճանշին» ՓԲԸ-ի միջև 30.06.2021թ. կնքվել է «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/05» ծածկագրով պետական գնման պայմանագիր, իսկ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է 01.07.2021թ., որպիսի որպիսի պայմաններում, համաձայն Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետի, ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության արդյունքում պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտված չէ:</u>***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 01.07.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**